Պետական գույքի կառավարման **կոմիտեի**

Նախագահի տեղակալ պարոն **Վարդան ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ**

«Քաղաքակրթությունների խաչմերուկ»

հասարակական կազմակերպության կողմից

Հարգելի՛ պարոն **ԿՈՍՏԱՆՅԱՆ**,

«Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպությունը 2010 թվականից հրատարակում է «Միջազգային հարաբերություններ. հայկական աշխարհ» հանդեսը **և ստեղծել է «Հայ Փաստ» վավերագրական ֆիլմերի ստուդիան**:

Ի պատասխան «Քաղաքակրթությունների խաչմերուկ» հ/կ-ին ուղղված Ձեր գրության՝ հայտնում ենք, որ հաշվի առնելով Գիտությունների ազգային ակադեմիայի գիտության կոմիտեի, փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի և Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջարկությունները, ներկայացնում ենք մեր գործարար ծրագրի լրամշակված տարբերակը:

Հասարակական կազմակերպության գործունեության **լրամշակված** ծրագիրը կցվում է:

Հարգանքներով Արթուր ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ

Հ/կ համահիմնադիր

հասարակական կազմակերպություն
общественная организация
non-governmental organization
02636094

հեռ. 093-49-50-29
093-10-77-33

e-mail karavarum@mail.ru

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՄՈՒՏՔ 3609-2021
«06» 05 2021 թ.

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ր Ծ Ր Ա Գ Ի Ր

«Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 5 ԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2021 թ.

Ի. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է

«18 մարտի 2015 թ.»:
Կազմակերպության գրանցման վկայականի համարն է 03Ա 999913:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

«Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպության նպատակներն են.

1. Հրատարակել անցյալի եւ ներկայի, արեւելքի եւ արեւմուտքի, հյուսիսի եւ հարավի քաղաքակրթություններին, նրանց աղերսներին վերաբերող տեղեկատվական նյութեր եւ բրոշյուրներ, ստեղծել համացանցի կայք՝ տարբեր լեզուներով:

2. Հավաքել եւ տարածել տեղեկատվություն տարբեր ազգերի / այդ թվում՝ վաղուց գոյություն չունեցող/ էթնիկ-պատմական, մշակութային, հոգեւոր, կրթական, իրավական, տնտեսական եւ այլ ոլորտների զարգացումների, փոխհարաբերությունների մասին:

3. Աջակցել մասնագետների եւ ուսանողների համապատասխան գիտելիքներ ստանալուն:

4. Նպաստել ԲՈՒՀ – երի համապատասխան ֆակուլտետներում գործնական դասընթացների կազմակերպմանը:

«Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպության խնդիրներն են.

1. Կազմակերպության գործունեությանը ներգրավել համապատասխան ֆակուլտետների ուսանողներին,

2. քննարկել առաջադրված օրենքների նախագծերը,

3. օրենքով սահմանված կարգով անվճար ներկայացնել անհատների, քաղաքացիների խմբերի եւ հասարակական կազմակերպությունների իրավունքները իրավական վեճերի կարգավորման գործում՝ պաշտպանելով նրանց շահերը դատարանում, կողմերի միջեւ միջնորդ հանդիսանալու, բանակցություններ վարելու եւ այլ միջոցներով,

4. նպաստել տարբեր քաղաքակրթությունների ներկայացմանը հնարավորին չափ լայն լսարանին, տարբեր լեզուներով դրանց ներկայացմանն ու տարածմանը

5. առնվազն տարին մեկ անգամ կազմակերպել քաղաքակրթությունների երկխոսությանն ուղղված սեմինարներ, համաժողովներ կամ գիտաժողովներ,

6. նպաստել տարբեր քաղաքակրթությունների փոխգործակցության, փոխլրացման գործընթացներին,

7. կազմակերպել հայ ժողովրդի պատմության, մշակույթի տարածմանն ուղղված միջոցառումներ, նպաստել դրանց տարածմանն աշխարհում, այդ թվում՝ վավերագրական ֆիլմերի միջոցով,

8. նպաստել աշխարհի շատ լեզուներով անտիկ ու ժամանակակից գրականության ու պատմության որակյալ թարգմանությանն ու տարածմանը,

9. հիմնել համապատասխան տպագիր եւ էլեկտրոնային գրադարաններ,

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

«Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ,Հասարակական կազմակերպությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով, **«Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպության** կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

«Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3 Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

1. «Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպության հիմնադիր անդամները,

2. «Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպության կողմից հիմնադրված «Միջազգային հարաբերություններ. հայկական աշխարհ» հանդեսի խմբագրության աշխատակիցները, «ՀայՓաստ» վավերագրական ֆիլմերի ստուդիայի աշխատակիցները,

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

«Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպության գործունեության ոլորտներն են

1. Քաղաքագիտական, միջազգայնագիտական, տնտեսագիտական ուսումնասիրություններ, վերլուծություններ, սոցիարցումներ,
2. Մասնագիտացված լրատվամիջոցի, գրականության հրատարակություն, թարգմանություններ, ֆիլմերի նկարահանում,
3. Գիտաժողովների, համաժողովների, սիմպոզիումների կազմակերպում,
4. Փոխանակման ծրագրերի իրականացում:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2.1. Ծրագրի նպատակը

Սույն ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել

1. **«Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպությունը հրատարակում է «Միջազգային հարաբերություններ. հայկական աշխարհ» հանդեսը, որը միտված է Հաաստանի, Սփյուռքի եւ համաշխարհային հանրությանը ներկայացնելու Հայաստանի Հանրապետության առաջնահերթությունները միջազգային հարաբերությունների ոլորտում, Հայաստանին առնչվող տարածաշրջանային զարգացումները , գիտական եւ հանրամատչելի հոդվածներ, վերլուծություններ, հայ եւ միջազգային փորձագետների տեսակետներ, գիտավերլուծություններ ժամանակակից քաղաքական գործընթացների, աշխարհաքաղաքական զարգացումների, պատմական անցյալի մասին եւ այլն:**

2. **«Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպությունը պարբերաբար կազմակերպելու է կլոր սեղաններ՝ նվիրված միջազգաին թատերաբեմում կատարվող իրադարձութուններին, Հայաստանի եւ համայն հայության շահերին առնչվող անցուդարձին...**

3. Առանձնահատուկ տեղ է հատկացվելու միջազգային կառույցների, կազմակերպությունների հետ համագործակցությանը:

4. Հատուկ նշանակություն է տրվելու միջազգային տնտեսական գործընթացներին, դրանց ազդեցությանը Հայաստանի տնտեսության վրա, ներկայացվելու են տնտեսական ճգնաժամերի հնարավոր ազդեցությունները, տնտեսական ներդրումների հնարավոր աղբյուրները, կատարվելու են սոցիալական եւ դեմոգրաֆիական իրավիճակների խորքային վերլուծություններ...

5. «Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպության կողմից հրատարակվող «Միջազգային հարաբերություններ. հայկական աշխարհ» հանդեսի կողմից կհրատարակվեն հատուկ թողարկումներ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության եւ հարեւան ու բարեկամ երկրների երկկողմ հարաբերություններին:

6. «Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպության կողմից ստեղծված «ՀայՓաստ» վավերագրական ֆիլմերի ստուդիայի միջոցով նկարահանվում են ֆիլմեր Արցախի Հանրապետության հայկական պատմաճարտարապետական հուշարձանների մասին, հայ – թուրքական հարաբերությունների մասին, որտեղ ներկայացվում են Թուրքիայում ապրող ազգությամբ հայ, քուրդ եւ թուրք հասարակական, քաղաքական, գիտական գործիչների տեսակետները վերոնշյալ հարաբերությունների եւ Հայոց ցեղասպանության մասին, ուր բոլորն անխտիր, առանց բացառության, ընդունում են ցեղասպանության փաստն ու դատապարտում այն:

Ստուդիան շարունակելու է նկարահանել հայանպաստ ֆիլմերի շարքը:

2.1. Ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա հինգ տարում կազմակերպության գործունեության կազմակերպման համար ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

1. Հասարակական կազմակերպության անդամների կամավոր մասհանումները,
2. «Միջազգային հարաբերություններ. հայկական աշխարհ», հանդեսի հոգաբարձուների ֆինանսական աջակցությունները
3. Հնարավոր դրամաշնորհային ծրագրերը,
4. Անհատների եւ կազմակերպությունների նվիրատվությունները:

2.2. Ծրագրի իրականացման ժամկետները

Ծրագրի իրականացման նվազագույն ժամկետը 5 / հինգ/ տարին է:

2.3. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 5 տարում «Քաղաքակրթությունների խաչմերուկ» հասարակական կազմակերպությունը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումներ

1. Հրատարակել «Միջազգային հարաբերություններ. հայկական աշխարհ» հանդեսը,

2. Կազմակերպել գիտաժողովներ, սեմինարներ, համաժողովներ,

3.Կատարել մասնագիտական եւ հանրամատչելի գրականության թարգմանություններ,

4. Հաստատել կապեր այլ երկրների համանման կազմակերպությունների հետ, հրատարակել հանդեսի հատուկ թողարկումներ՝ նվիրված հարեւան եւ բարեկամ երկրների հետ երկկողմ հարաբերություններին:

5. Նկարահանել վավերագրական ֆիլմեր:

2.4. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրի միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ ,Քաղաքակրթությունների խաչմերուկե հասարակական կազմակերպությունը կընդլայնի իր կողմից հրատարակվող «Միջազգային հարաբերություններ. հայկական աշխարհ» հանդեսի եւ «ՀայՓաստ» վ/ֆ ստուդիայի գործունեության ոլորտները, աշխարհագրությունը, տպաքանակը: Գիտաժողովների, սեմինարների, երկկողմ եւ բազմակողմ միջոցառումների միջոցով ներկայացնել ՀՀ առաջնահերթությունները արտաքին քաղաքականության ոլորտում, ներկայացնել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, դրան խոչընդոտելու թուրքական իշխանությունների հակահրավական մեթոդները, Արցախի խնդրի արդարացի լուծման պատմական եւ իրավական հիմքերը եւ այլն:

Կապ հաստատել արտասահմանյան մեր գործընկերների հետ, որոնց միջոցով միջազգային հանրությանը ներկայացնել հայանպաստ դիրքորոշումները վերոնշյալ եւ այլ հարցերում:

Արթուր Ղարագյոզյան
«Քաղաքակրթությունների խաչմերուկ»
հասարակական կազմակերպության
համանիմանադիր